

տական տաղերուն եւ Ծրիկի վերագրուած տաղաչարքին մէջ զոր Պ. Կոստանեանց հրատարակած է (Նոր Ժողովածու, Գ. Պրակ), ու նոյն իսկ Կ. Երզնկացիի քերթուածներէն ոմանց մէջ, Քուչակի հատորիս ուսումնասիրութեանը մէջ, մղուած այն պաշտումէն զոր այդ անզուգական երգիչն ինծի կը ներշնչէր, ես կը հակէի աւելի Քուչակին վերագրելու այդ բոլորը՝ քան Պրուզին կամ Ծրիկին, որոնք իբր բանաստեղծ չեն կրնար բաղդատուիլ Քուչակի հետ Բայց հարցը լուծուած չէր ստով, եւ ես իսկ արդէն լուծուած չէի համարեր զայն: Կարելի է ենթադրել — ենթադրութիւն զոր ըբած եմ արդէն Քուչակի ուսումնասիրութեանս մէջ — թէ այդ խրատական տաղիկներուն իմաստները, պատկերները՝ ժողովրդական հին առածներէ, աստութիւններէ առնուած ըլլան, ինչ որ կրնայ բացատրել համանման իմաստով տաղիկներու գրանուելը տարբեր բանաստեղծներու մէջ: Բայց այն տեղերն ուր ոչ թէ իմաստի նմանութիւն,

այլ իմաստի ու ձեւի բացարձակ նոյնութիւն կը գտնուէք, պէտք է ընդունիլ որ անձ մը է՛ն առաջ խմբագրած պէտք է ըլլայ այդ տաղիկները, եւ թէ օրինակիւնները յետոյ այդ տարածուած ու ժողովրդականացած տաղիկները վերագրած են մէկէ աւելի բանաստեղծներու. զժուար է առայժմ վճռական լուծում մը տալ այս հարցին: Ամէն պարագայի մէջ Քուչակի անուն ու ապրած թուականը անյայտ է դեռ, մինչ Պրուզինն ու Ծրիկինը ծանօթ. աւելի քան հաւանական է որ Պրուզ եւ Ծրիկ աւելի հին են քան Քուչակը. կը մնայ գիտնալ ուրեմն թէ այդ երկուքէն՝ որ ժամանակակից են՝ ո՞րն է բուն հեղինակը այդ տաղիկներուն: Հաւանականագոյնն է Պրուզ. իր տաղաչարքը աւելի ճոխ է քան Ծրիկի վերագրուածը որուն մէջ նոյն տաղիկները կը գտնուին. այդ տաղաչարքէն՝ ըստ Հ. Պոտուրեանի՝ բաղձաթիւ օրինակներ հասած են մեզի, ու անոնցմէ շատերը Պրուզի անունը կը յիշատակեն անոր իբր հեղինակ: Ա.Ձ.



Հայ էջեր

Ե Ր Պ

ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՍՏԵԱԼ



րկուս ի մէկտեղ բերած գերդ ընկեր կ'ստեն թէ պահէ(1). Ու չորս բընութիւնս օտար(2) հետ իրաց կ'ստեն թէ սագէ՛. Չայս չորս յիրար ո՞նց պահեմ, ամէն մէկ յի՛նքըն կու քարշէ. Ձիս յոգս(3) ի յայսոց միջին գերդ կըրակ ըզմոմ կու թալէ:

Հողըս չոր խուշկիկ առնէ, ջուրըս գէճ կու ցրտացընէ, Գամին գիս յերերք ունի, կըրակին բոցըն կու վառէ:

(1) Տաղաչարքիսն է՛ ինչպէս Քուչակի տաղերունը՝ 7—8 :
 (2) Ձեռ. 105ար. — (3) Թիւ 1339 ձեռ. Ձիս հուրս.

Հանցեղ սիրելի չարկամ մէկտեղ ո՞վ իսկի տեսեր է .
 Հոգիս թէ՛ ի վեր քաշէ , հողըս ծանր ի վայր կու հակէ :
 Վախեմ թէ հողոյս լըսեմ , նստի(ք) հոգոյս բանըն դըժարէ .
 եւ հետ հոգոյն ո՞վ թուչի , ե՛ս նորա տունըն հեռի է :
 Հինգ դուռն է ի բաց թողած . թէ փակէ՛ որ գող չի մտնէ ,
 իջգողս ես-տանես ունիմ որ զդուներն ի բաց կու պահէ :
 Եաղուած ես ի չորս իրաց , այդ ցեղ շէնքդ ամուր չի լինի .
 Օղըն հողոյն ի՞նչ նըման , հուրն ու ջուրն են խիստ ատելի .
 Ի հակառակէ ստեղծած , եւ եղած ես մարդ կենդա . ի .
 Վերնայ օրն ու հուրն ու ջուրն , եւ մարմինըդ դառնայ փոշի(ծ) :



- (4) Նա կը պակտի ձեռագրին մէջ :
 (5) *«Վախեմ թէս առկէ մինչև Վերնայ օրն . թէ՛ թիւ 1339 է թէ՛ թիւ 459 ձեռագրին մէջ կը գտնուի «Այդ ջախիկդ որ դու ունիս» տողէն անմիջապէս յետայ . ականքի է սակայն որ այս ուժը առջերը այստեղ պէտք է գրուին , որովհետև նախորդ ուժը առջերուն շարու-նակութիւնն են , թէպէտ թիւ մը խառնաշփոթ է պակասաւոր (տարիչ ձեռագրերնու հետ համեմատուը անհրաժեշտ է՝ ճշգրտոյն ձևը գտնելու համար) : Այս առաջին տասնվեց տողե-րուն համարժէքը սա ձևով կը գտնենք Կոստանդին Երզնկացիի Ժ . քերթուածին մէջ (որուն չափն է 6—8) :*

Հոգիս է խիստ յօժար բանից իմաստընց լըսել ,
 Մարմինս է հեշտասէր զի յաշխարհէս է ինք ծընել .
 Ի յերկուքիս միջին՝ մոմ եմ ի մէջ հրըոյն վառել ,
 Անհիմն եւ անհաստատ՝ եմ անհանգիստ ի շուրջ եկել :
 Ի չորս հակառակէս ուսկամ յերծեր եմ մընացել ,
 Զի հուրն ի վեր քաշէ , նայ հողըս ծանր ի վայր հակել ,
 Սակաւ մի ի ջըրոյն՝ բոցըն հրըոյս է հանդարտել .
 Քամին ի յօգնութիւն եւ բորբոքէ զհուրըս վառել :
 Երկու կամաց ծառայ՝ դըժար է ինձ յիրաց սազել ,
 Կամ հուրն ի ծոցն առնուլ եւ անվընաս զինքըն պահել ,
 Կամ մարմնաւոր ոտօք՝ վերայ ծովուն թեթեւ քայլել ,
 Կամ հողմն արագընթաց մարդ ընդ ձեռամբն է արգելել :

Բունակի վերացրուած խրատականներուն մէջ կը գտնենք նոյն խնամանքը , երբ քառեակով , շատ աւելի մօտ Պրուգին քան Կ . Երզնկացիին .

Երկուան ի մէկտեղ բերած զէտ ընկեր կ'ասեն թէ պահէ՛ .
 Ու չորս բընութիւնս օտար հետ իրաց կ'ասեն թէ սազէ՛ .
 Հինգ դուռն է ի բաց թողած , զայդ ամուր կ'ասեն թէ պահէ՛ .
 Հոգիս իմաստնոց(?) միջին զէտ կըրակ որ զմտըն հյալէ :

Երկու ընկերացն ասեմ , մէկըն հողն է , մէկըն՝ հոգին ,
 Հոգին թէ ի վեր քաշէ , հողըն ծանար ի վար կու հակէ .
 Վախեմ թէ հողոյս լըսեմ , նա հոգւոյս լոյսըն պակասէ .
 Հետ հոգւոյն ա՛մ ո՞վ թուչի , երբ նորա տունըն հեռի է :

Զհինգ դուռն է ի բաց թողած , զայդ ամուր կ'ասեն թէ քակէ՛
 Այս քերդս է գանձով ի ի ու հազար չարկամ կու մտնէ .
 Զչարկամս ես ի յիս ունիմ , զբզուռնին զամենն կու փակէ ,
 Թագաւորս է ի ներք նստած , նա զայս ալ գողըն կու խաբէ :

Բունակի քառեակները շատ մօտիկ են Պրուգի տարբերուն , բայց ունին քանի մը նշա-

Աւա՛ղ զայն որ շատ դատեր , մարդ չըկայ որ զերն(2) ճատէ(1) :
 Զալկեց թէ՛ ճոհար ունի , եւ յառջեւ խոզին կու թափէ :
 Խոզն՝ ճուհար ե՛րբ ճանաչէ , զօրն ի բուն զաղբն կու փորէ ,
 Կոխէ նա ըզքո ճոհարն եւ դնչովն նա ըզքեղ խոցէ (2) :



Յորս քան ա՛ռ խըրատ յինէն , որ զամէն աշխարհս քեզ արժէ .
 Զայլոց մեղք դու մի՛ քննեք , զքոյդ յերակ մրտօքդ՝ անդի՛ճէ՛ .
 ՁԱտուած մօտ ի քեզ դու տես եւ զմահուդ՝ օրն դու յըէ՛ .
 Ըզխրատս ի սիրտդ տնկէ՛ , զքեզ յամէն չարեաց այս փրկէ :



Աւա՛ղ , մեզ հայիլ պիտի յայն արեւն որ զոյս կրուցարնայիր :
 Թատ կայ ի յարեւ նըման , ի արնէն օձոն կու վազէր :
 Գիտուն մարդն յարեւ նըման , խօօքքն լուս զայնուս կու ճնազէս :
 Ի անգէտ մարդն օձուն նըման , Գանապաղ ըզմարդ կու խոցէ :
 Մարդ կայ որ հազար արժէ , հազար կայ որ մէկ մի չարժէ ,
 Ան մարդն որ հազար արժէ , անգէտին մօտ փող(3) մի չարժէ :



Բազան ի անտառ(4) մորին թէպէտ բու թէպէտ բազա է ,
 ձոհարն ի ծովուն միջին թէպէտ քար թէպէտ ճոհար է ,
 Իծօքն ի յանգէտն ք մօտ միսք արա՛ թէ ի՛նչ նըթան է ,
 ձըրագն ի յառջեւ կուրին(5) կու վառի՛ ւ ինքն(6) չի գիտէ :



Իծօքն է ի ծով նըման , որ քանի չափես կու տանի ,
 Անգէտն է ի տիկ նըման . փառչ էվէլ լընուս նա պատուի(7) :



Աշխարհս ի տղլապ նըման որ ի վեր Լ ի վայր Թաւառի .
 Վերինն ի վայր դառնայ եւ վարինն ի վեր(8) ոլորի(9) .

Նակելի տարբերութիւններ . իսկ Կ. Երզնկացիին կտորը պատմական անկասի ե Պուզնէն ,
 և է՛ն առաջ Խմբագրութեանը՝ հասկնականաբար . բոլորին ալ ազդեցող ժողովրդական հին
 առածանէ Թուրքիաներն . Ըլլալու են մասամբ , մասամբ ալ Եկեղեցւոյ հայրերու խրատական
 գրականութիւնէն փոխուցներ թերես :

- (1) Զեչմըն (եչուժք, ելքը) . Քուչակի մէջ՝ զերն ցամայէ :
- (2) Այս բառակիրն առային երկու տողերը Վենետիկ երկու ձեռագիրներուն մէջ կը գրենուն : Դասիթ արբայի որդին . բառակիրն տակ . պէտք է գրուին այստեղ . այսպէս կազմուած բառակը՝ սրցէն՝ ցրեթէ նոյնուձեամբ կայ նաև Քուչակին մէջ : (Յանրոզ բառակիրներուն մէջ ալ կան քանի ժը հետս որ աննշան տարբերութիւններով կը գտնուին նաև Քուչակի մէջ , առջերկի՝ Կեանքցիքի՝ յիշատակելի այդ բոլոր վարդաբանները :) :
- (3) Թուս . Թէկ . փոխդ . Թ . (4) Թուս . Ի անտար . (5) Թիւ 1339 ձեռ . ի առիւ զարդ :
- (6) Թեւ եւ ինքն : (7) Թեւ . պատուի : (8) Թիւ 459 ձեռ . ի վերին : (9) Վերննայի ձեռ . օլորի , Ս . Դավարու ձեռ . քուչակի :

Մըտիկ դու: Ի՞նչուսանն արա՛մ, որ Թանպու՛մ 'ւ օրոցք շինէ նայ ;
Մէկըն գայ եւ մէկն երթայ , նայ իւր բան պակաս չի մընայ :



Աշխարհս է ոչ ինչ Երման , շատ դատին դառնան փոշիճան ,
Հալալ ու ֆարա՛մ այնեն՛ ֆոս Թողուն 'ւ ի ֆոն կու դընան ;
Ջան արա՛(4) գործէ՛ բարի որ յետոյ չի՛նիտ փոշիճան ,
Թէ չէ Աղամայ դրախտէն քեզ կանանչ տերեւ մի չի տան :



Աշխարհս է կանանչ մարգեր , մենք ի մէջն ենք կաքու ձագեր ,
Հրեշտակնին արծիւ զարծեր կուտանին զվեզ մէկ մէկ ի վեր(2) :
Մանկտիք , երբ ի ֆայ նըստիք , մէնեցեք աղքատք ձեզ ընկեր -
Մեռնի՛ք 'ի յանդէն երթայք , կու նըստիք քանց մէկ մ'այլ ի վեր :



Ելայ ժողվեցի(3) զիմ մեղքն ու գըրի առչեա(4) ու լացի .
Ցանդէնըն քարվան կ'երթաք , շալկեցի 'ւ ի ֆետ գընացի .
Հրեշտակն այլ ի գէմա ելա՛մ Ռը(5) կ'երթա աղորմ ու լալի .
Այդ շալկիկը որ դու ունիս՝ անդէնին քեզ տեղ չի ընկնի(6) :



Երնէկ ես նորա աճե՛մ որ աշխարհս ի օրու կ'ուզենայ ,
Ջիւր մեղքն ի յիշումն աճէ՛ զօրն ի քուն նա նստի ու լայ(7) :
Արտատուք սապոն ինի , սեռու՛ծիւնքն(8) ըսպիտականայ .

(4) Ձեռ. առա ու : (2) Թիւ 1339 ձեռագրին մէջ այս սուղը սա տարբեր ձեւով կը գտնուի .

Գըրողն է եղեր բազա կիւ գըրէ մէկ մէկ դար ի վեր :

Գրող բառը (մտնուան հրեշտակ) ճին ձեռագրերնրուն մէջ միշտ գ-ով է և մեկնուած է « այն ոգին որ մեռնելիք օգիները կ'արձանագրէ » . արգ այս սուղին մէջ աւելի խելքի մաս է կարգալ « կրողը կը կրէ զար ի վեր » քան « կը գրէ » . կարելի չէ զար ի վեր գրել , այլ կրել . ասնիլ (emporter) հոգիները: Գրող ուրե՛ն պէտք է ըմբռնել իբր « կրող » , չնոգի առնող սանոզ (հոգեառ հրեշտակ) : Աւելի հաւանական կը թուի այս մեկնումիւնը , զոր կ'ենթարկենք մասնագետներու խորհրդածումեանը :

Թիւ 459 ձեռագրին մէջ՝ Հրեշտակնին արծիւ դարձերի օտղէն տեմիալաչա յետոյ կը գտնուին ճեռեակ սուղերը , որ տեսակ մը variante թն «Աշխարհս ի անպար ջառեակին » .

Այս աստնվորին բարիքն չէ մարդոյ իսկի մնացական .
Աշխարհս է քավան նըման , դասք մի գան ու դասք մի կ'երթան .
Աշխարհս է ի ջարխ նըման որ ի վեր ու վար Թաւալի ,
Ջվարինն այլ ի վեր ֆանէ ու վերինն ի վայր Թաւալի :

(3) Ս. Զապարն ձեռ. ժողվեցի . Վիեննայի ձեռ. ժողվեցի : (4) Թիւ 1339 ձեռ. ձեռ. զեւ , Վիեննայի ձեռ. առջև : (5) Ձեռ. քէ ուր : (6) Ձեռ. չի ընկնիք : (7) Քննեակի ձեռ. մասի . Վիեննայի ձեռ. Գա Գառ : (8) Վիեննայի ձեռ. սուղերին

Թէ չէ օր հարսնիցըն(1) գայ, նա Պանգերծ հարսին չունենայ :

Աշխարհս է ի ծով նըման, ով որ գայ անձաց չիմընայ .
Ցայս ծովս ես ի նաւ մըտայ, գընաց նաւս եւ ես չիմացայ .
եզեր մօտեցեր է նաւս(2), վախեմ թէ քարի գիպենայ,
Գալտի իմ աղւոր շինուածս ու տախտակըս մէկվէկանայ,
Երթամ ազալեմ զԱստուած որ հանէ դիմաց մի քամի,
Այս մըժանըս լոյս մի տայ, զմեզ բարի երկիր մի տանի(3) :

Մարդն որ օտար տեղ նըմայ, գատ մի խելք կու պիտի նորա .
Ամէն մարդոյ ցած կենայ, ապա իւր բանըն լինենայ .
Մըտիկ դու ծառի՛ն արա՛, որ քանի՛ ճըղեր կայ ի նա .
Այն ձիւղն որ զպըտուղն ունի քանց զդարտակն ի ցած կու կենայ:

Ջաղըն բարիոք(4) ասեն, Տէր Քրիստոս որ գայս հրամայէ .
Ջանհամն ինքն ի հաժ ածէ, եւ զնեխածն անուշացընէ(5),
Ջաղըն անհամ ո՛վ տեսել, Թէ լինի անպիտանացու .
Ոչ աղբ ի պարտեզ ձըգել, ոչ է քար ինքըն շինելու :

Լաւ մարդ ես նորա ասեմ որ բանայ գըբըանըն համով .
Հանցեղ լեզուն գին չունի, զինչ լընուն տուն մի ճոհարով .
Աստուած երբ զաշխարհս արար, զօդն ու գիւղըն ու գիողըն՝ չըբրով,
ՄԹխալ մ՛աւելի չարար, այլ կշռեց զամենըն չափով :

Լեզուն է գործիք քանի, արդարոցն քան զհալած ոսկի .
Ջմարդոյն է մէկ փերթ(6) ստեղծեր եւ օձուն է երկու ճըղի .
Այն մարդն որ երկու խօսի, զմէկըն քաղցր եւ զմէկըն լեղի,
Եղբայր է օձին եղեր եւ զնորա անէծքն ընդունի :

Մառին ձիւղն երբ չոր լինի, ո՛վ ասէ Թ՛իսկի(7) կանանչի,
Սպիտակ մազն որ սեւ ներկի, ո՛վ ասէ Թ՛իսկի(8) սպիտակի .
Բայց մարդ մեղաւոր ու սեւ ես գիտեմ որ կու սպիտակի,
Աստուած մէկ բանիկ ուզէ, որ ասէ Մեղայ, ու քաւի :

(1) Վիեննայի ձեռ. հարսնիքն : (2) Թիւ 1339 ձեռ. մօտեցեր եմ ես : (3) Այս վերջի երկու տողերը կը գտնուին միայն Թիւ 459 ձեռագրին մէջ (4) Բարաբ. (5) Թիւ 1339 ձեռ. անուշացընէ : (6) Թիւ 459 ձեռ. անուշացընէ : (7) Թիւ 1339 ձեռ. կերք . Թիւ 459 ձեռ. փերթ : (1—2) ձեռ. քէ իսկի :

Շատ Թագաւորաց մեծաց յիմաստնոց արանց լըսեցի ,
Ք՛(1) այնչափ չըկշտանայ մարդն աստնւորովս ինչ որ մեռանի .
Տանին գերեզման դընեն եւ հողով իւր աչքըն լեցուի .
Ապա փոշիմնայ 'ւ ասէ Թէ Հերի՛ք է 'ւ այլ չի պիտի :

Ջայս որ ես հետ ինձ արի , չէր արեր այլ աղամորդի ,
Որ շիշ մի հալած ոսկի ի գետինն ի վայր վաթեցի .
Հազար ձի վազան բերի , վազցուցի 'ւ այլ ոչ հասուցի .
Ի՞նչ շահիմ (2) յետին խելացս երբ առջին անունն աւերի :

Մէկ մարդ մի Ֆուհար ունէր 'ւ ի խելաց շահել չը կարաց .
Ձինչ խելքն ի վերայ եկաւ , նայ գընաց Ֆուհարն ի ձեռաց .
Գընաց նա ի վայր նստաւ ողորմիկ ու շատ մի իլաց(3).
Նորա լացն այլ ի՞նչ շահէ , երբ գընաց Ֆոհարն ի ձեռաց :

Մարդն որ շատ անդէճ լինի , յաշխարհիս հոգըն կու մաշի .
Շաքարն իւր լեղի լինի , եւ լեղին իւրեն ըմպելի ,
Հով ջուրըն կըրակ Թըւի ; եւ յահէն գերդ մոմ կու հալի ,
Դիւր կեանքըն դըժար Թըւի , 'ւ ի դըժարն ինքըն չի հանգչի :

Դաւիթ արքային որդի Սողոմոն գայս մեզ կու ասէ .
Ձխրատ իմաստնոյն(4) դու տո՛ւր , աւելի նա ըզբեզ սիրէ .
Թէ անգէտ 'ւ անմիտ մարդոյն խըրատ տաս նա ըզբեզ ատէ ,
Աւ Թուր ու դանակ առնու , Թէ կարէ նա ըզբեզ սպանէ :

Հոգին հողվըրովն(5) անցաւ ու զմարմինն ի հողն անիծեց .
Թէ մեղքն ես ու դու արաք , յանդէնն(6) ի՛մ երեսն ամաչեց .
Մարմինն ի հողուն ի դուրս այսպէս խսաք(7) գհոգին վըճարեց ,
Թ՛ ես հող էի հող (8) դարձայ , քո ամալն է ըզբեզ բունեց :

Է՛ գերվար(9) մարդ ու տխմար , յէ՞ր չես երթար ի միտք ի վայր .
Կորուսիւր զազատ հոգիդ(10) , 'ւ ադ հողեղէն մարմնոյդ համար .
Ի կեր 'ւ ի խում ես հետ մեղաց , ի ժուռ կուգաս զօրն անդադար .
Առնուս ու տաս մարմնոյդ ի կեր , գիրացընե՛ս որդանց համար(11):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

(1) Ձեռ. Թէ . (2) Ձեռ. ասիմ ես : (3) Ձեռ. մի լաց : (4) Թիւ 1339 ձեռ. զխրատն
իմաստնոց . Թիւ 459 ձեռ. զխրատ իմաստնոց : (5) Ձեռ. հողվըրովն : (6) Ձեռ. յանդէնն :
(7) Ձեռ. խոստ : (8) Ձեռ. Թէ ես հող էի ի հող : (9) Թիւ 1339 ձեռ. գերվար . Թիւ 459
ձեռ. գերվար : (10) Թիւ 1339 ձեռ. Քանց կորուսիւր զազատ հոգիդ . Թիւ 459 ձեռ. Քանց
կորուսիւր զաղբաս հոգիդ : (11) Այս քառեակին վերջին երկու տողերը չեն համաձայնիւր
7—8 չափին :